Հավելված
Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի
ավագանու՝ 08.02.2024թ. N 11-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2024ԹՎԱԿԱՆԻ՝ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ, ԲՆԱԿԵԼԻ ՈՒ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ, ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐ ԵՎ ԱՅԼ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Վարձակալությամբ տրվող տարածքների համար՝

1.1 համայնքային սեփականության բնակելի տարածքները՝ տարեկան վարձավճար 1քմ՝ 200 դրամ.

1.2 համայնքային սեփականության ոչ բնակելի տարածքները՝ տարեկան վարձավճար 1քմ՝ 1000 դրամ.

1.3 Գագարինում՝ տարեկան վարձավճար 1քմ՝ 200 դրամ.

1.4 համայնքային սեփականություն հանդիսացող արտադրական և նկուղային տարածքները՝ տարեկան վարձավճար 1 քմ՝ 200 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքի սահմաններում սահմանել հողօգտագործման և կառուցապատման վճարների հետևյալ դրույքաչափերը՝

2.1 Սևան քաղաքի Նաիրյան փողոցում՝ Աբովյան փողոցից մինչև Շինարարների փողոցում տեղադրվող օբյեկտների հողօգտագործման համար՝ կառուցապատման տարեկան վճար՝ 1քմ՝ 400 դրամ

2.2 Սևան քաղաքի մնացած տարածքներում տեղադրվող օբյեկտների համար տարեկան վճար՝ 1քմ՝ 300 դրամ

2.3 Ցամաքաբերդ և Գոմաձոր թաղամասերի, համայնքի բնակավայրերի օբյեկտների համար՝ տարեկան վճար 1քմ ՝ 150 դրամ

2.4 ավտոլցակայանների համար՝ յուրաքանչյուր 1քմ հողատարածքի համար՝ տարեկան վճար՝ 150 դրամ

2.5 ավտոտնակների համար՝ յուրաքանչյուր 1 քմ համար՝ տարեկան վճար՝ 150 դրամ.

2.6 բացօթյա սրճարաններ կազմակերպելու համար՝ 1քմ հողօգտագործման, կառուցապատման տարեկան վճար՝ 150 դրամ

2.7 գոյություն ունեցող հասարակական և արտադրական շինությունների սպասարկման համար տրամադրվող հողերի կառուցապատման տարեկան վճար՝ 1 քմ՝ 30 դրամ .

2.8 ավտոկայանատեղերի համար, յուրաքանչյուր 1 քմ համար՝ հողօգտագործման տարեկան վճար՝ 130 դրամ .

2.9 գյուղատնտեսական շուկաներ կազմակերպելու համար հողօգտագործման տարեկան վարձավճար՝ 1 քմ՝ 120 դրամ .

2.10 բացօթյա տոնավաճառներ կազմակերպելու համար հողօգտագործման տարեկան վարձավճար՝ 1 քմ՝ - 100 դրամ .

2.11 արտադրական օբյեկտների կառուցման համար տրամադրվող հողերի տարեկան վճար՝ 1 քմ՝ 30 դրամ .

2.12 կանաչապատման, բարեկարգման նպատակով տրամադրված հողի տարեկան վարձավճար՝ 1քմ՝ 30 դրամ .

2.13 էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների կառուցման համար տրամադրվող հողերի տարեկան վճար՝ 1քմ՝ 30 դրամ.

2.14 ք. Սևան, Նաիրյան 164 հասցեում (համայնքապետարանի վարչական շենքում) ոչ բնակելի տարածքների վարձակալության վճար 1քմ ընթացիկ տարվա համար՝ 5.000 դրամ.

2.15 Արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների համար՝ ընդերքօգտագործման տվյալ հողամասի կադաստրային արժեքի 0.25%-ը:

3. Սահմանել, որ համայնքի ավագանու կողմից սույն որոշմամբ հաստատված հողօգտագործման վճարները Սևան քաղաքում համարվում են մրցութի մեկնարկային գներ, ինչպես նաև առանց մրցույթի տրամադրման դեպքում՝ ուղղակի վարձակալության և կառուցապատման վճարներ, իսկ համայնքի բնակավայրերում՝ պետության և համայնքների սեփականություն հանդիսացող հողամասերի /ներառյալ՝ գյուղատնտեսական/ տարեկան վարձավճարի և (կամ) կառուցապատման իրավունքի վճարի չափը սահմանել անշարժ գույքի հարկի տարեկան դրույքաչափին հավասար:

4. Համայնքի տարածքում յուրաքանչյուր անշարժ գույքի հասցեավորման աշխատանքների ծառայության վճար՝ 1000 դրամ:

5. ՀՀ կառավարութան՝ 04.06.2020թ. N1023-Ն որոշման, 19.11.2019թ. ՀՕ-225-Ն ՀՀ օրենքի համաձայն՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդային մեկնարկային գին սահմանել բարձր լեռնային բնակավայրերում գտնվող հողամասի կադաստրային արժեքի 50 տոկոսի չափով՝ ըստ գոտիների, լեռնային բնակավայրերում՝ հողամասի կադաստրային արժեքի 100 տոկոսի չափով՝ ըստ գոտիների:

6. Սևան համայնքում հողամասերի ուղղակի վաճառքի գին սահմանել կադաստրային արժեքի չափով՝ ըստ գոտիների:

7. Սևան համայնքի բնակավայրերում գյուղատնտեսական նշանակության հողամասերի ուղղակի վաճառքի գին սահմանել, ըստ բնակավայրերի, ՀՀ կառավարության կողմից սահմանված կադաստրային արժեքը:

8. ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածին չհամապատասխանող վարձակալության իրավունքով պատկանող հողամասերի ուղղակի վաճառքի գին սահմանել տվյալ պահին գործող հողամասի կադաստրային արժեքի չափով՝ ըստ ՀՀ կառավարության կողմից սահմանված գոտիների: